

ԱՐԹՈՒՆ ՀԱՅԻՏՅԱՆ

ՈՐԻԳԵՆԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԶՄԱՐԴՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ*
(185—254)

ՈՐԻԳԵՆԵՍԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որիգենեսի գործերից մի որոշ մաս թարգմանվել է Ե դարում հայերենի «Հատուածք միայն իր բազմաթիւ և իմաստուն երկասիրութեանց հասած են առ մեզ հայ թարգմանութեամբ: Ասոր պատճառը կը համարիմք ենթադրել իր անուան և հռչակին փառաց հետ՝ գրուածոց կրած հակառակութիւնն՝ անդստին ի ժամանակակցաց և ի նախանձողաց հեղինակին և իրեն ընծայուած մոլորամիտ վարդապետութիւնք, յորոց նախնիք մեր ուղղախոհք՝ լաւ համարեր են զգոյշ կենալ և զգուշացնել զազգն»[35]:

Մեր ձեռագրական գանձերի մեջ կան Որիգենեսի մատենագրական վաստակի հետևյալ հայերեն թարգմանությունները.

1. Ի խմբագիր մեկնութենէ Կաթուղիկեայց թղթոց. «Քանզի զչարութիւն սահմանի սէր աշխարհի. իսկ առաքինութիւն և չարութիւն ի միասին բնակիլ ոչ կարեն, ուրեմն ապա թշնամիք են»:

2. Այլ հատուած ի նոյն գրոց. «Որ յաղագս մեղաց սիրէ զաշխարհ, թշնամի գտանի Աստուծոյ. սոյնպէս և որ զառ Աստուած սէրն բարեպաշտութեամբ հաստատէ, վաղվաղակի թշնամի գտանի աշխարհի»:

3. Միւս այլ հատուած ի նոյն գրոց. «Թէպէտ և պատշաճապէս զօրութիւն բանիդ, եդան քննութիւնքդ, սակայն հարկաւոր համարեցայ և զայս յաւելուլ վասն մեկնութեան և աւկտի (օգտի) խնդրողաց:

4. Հատուածք ի խմբագիր մեկնութենէ Ղևտական գրոց. «Ղեւտական գիրքս մի են ի հնգիցն գրոց զոր գրեաց Մովսէս Երբայեցւոց օրէնսդիր... ոչ միայն ուղղափառացն եդեալ է զմեկնութիւն, այլ և հերձուածողացն բազում ինչ»:

5. Մեկնութիւն Երգոցն Երգոյն. «Խօսք Որոգինեսի փիլիսոփայի յԵրգ Երգոցին մեկնութիւն». թարգմանութիւն աւելի նորագոյն քան զնախակարգեալ հատուածոցն»:

6. Պատճառք չորեքտասան թղթոցն Պաւղոսի յՈսկեբերանէ, յԵփրեմէ, ի Կիւրղէ և յՈրոգինեսէ:

7. Ցառաջաբան նախակարգեալ գրոցն Թագաւորութեանց, զորմէ ասի լինել Որոգինեայ. ի գրչագրի աստուածաշունչ մատեանն[36]:

1979 թվականի «Էջմիածին» ամսագրի երկրորդ համարում Տ. Եզնիկ քահանա

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1981 թվականի № Բ-ից:

[35] Մատենադարան հայկական թարգմանութեանց, նախնեաց (դար Դ—ԺԳ) Վենետիկ, 1889, էջ 649:

[36] Նույնը, էջ 649—653:



Պետրոսյանը և Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը հրատարակեցին «Նշխարներ Որոգինեսի հայկական թարգմանություններից» աշխատությունը՝ «Խօսք Որոգինիից գիրք հինգերորդ ասացուած վասն վիշապին, որ ի Յոբ պատմի, ի Դաւիթ և յայլս», էջ 21—24: «Աղաչեմ, սիրելիք, աջ միտ դիր. ամենայն գոյացեալք ըստ իւրաքանչ[իւր] սերի անձնականի են»:

Որիգենեսի սույն հատվածի հայերեն թարգմանությունը ըստ հրատարակիչների, տպագրվում է «մեզ հասած միակ օրինակից՝ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 6036 ձեռագրից» (էջ 121բ—133բ):

«Նշխարներ Որոգենեսի հայկական թարգմանություններից» հոդվածի երկրորդ մասը՝ «Խաւսք Որոգինի: Գիրք հինգերորդ» հրատարակվել է «Էջմիածին» ամսագրի 1980 թվականի մայիսի համարում, էջ 39—42: Որիգենեսի սույն հատվածը նշում են հրատարակիչ Տ. Եզնիկ քահանա Պետրոսյանն ու Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը «Ծննդոց ԼԲ 6—19 համարների մեկնությունն է մեզ հասած միակ օրինակից՝ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 6036 ձեռագրից (էջ 1ա—9բ), գրված 1371 թվին: Տեքստին կից տրված են ձեռագրի թյուրընթեռնելի հատվածների լուսապատճենները»[37]:

Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում կան հետևյալ թարգմանությունները Որիգենեսի մատենագրական վաստակից: Ցուցակ ձեռագրաց, Ա հատոր, 1965:

1. **92.** Որոգինեսի մեկնութիւն Երգոյն Երգոցի, 1781 թվ. էջ 247:

2. **1158.** Ժողովածու, 1768, Էջմիածին, Որոգինէսի, Վարդան Արևելցու, Գրիգոր Տաթևացու՝ մեկնութիւն Երգոց Երգոյն, էջ 490:

3. **2567.** Ժողովածու, 1659 Եդեսիա, Որոգինէսի խօսք լեզեկիէլէ, ի վերայ իշխանին Տիրոսի, էջ 827:

4. **2602.** ԺԳ դար, Որոգինէսի մեկնութիւն Երգոց Երգոյն, էջ 834:

5. **3215.** ԺԷ դար, Մեկնութիւն Երգոց Երգոյն, Նարեկացի, Որոգինէս, Հիպպոլիտ Բաստոուցի, էջ 966:

6. **3319.** 1758 թ. Ս. Հովհաննէս Մկրտիչ վանք. Սպեր, Մեկնութիւն Որոգինէսի, Երգոց Երգոյն, էջ 988:

7. **4066.** Ժողովածու, գրիչ Կոստանդին, 1283, Անազարբա, մեկնութիւն, էջ 1141:

Մատենադարանի Ձեռագրաց ցուցակի Բ հատորում, 1970, Երևան, կան հետևյալ թարգմանությունները.

8. **6036.** Ժողովածու, 1371, գրիչ Մկրտիչ քահանա, Գրիգոր քահանա, խօսք Որոգինէսի (գիրք հինգերորդ) բանք պիտանիք (յաղագս օձի, երկարակեցութիւն նախահարց, աւանդութեանց Հրէից, Գեղարդեանն):

9. **9502.** Ժողովածու, 1823—1824, Կ. Պոլիս, գրիչ Գևորգ Ֆրանկուլյան, իզմիրցի, քարոզգիրք. Որիգենեսի մեկնութիւն Երգոց Երգոյն, էջ 941:

10. **6720.** Մեկնութիւն Երգոց Երգոյն. ԺԸ դար. Գրիգոր Նարեկացի, Որոգինես, Վարդան Արևելքցի, էջ 380:

11. **9895.** 1781, Մեկնութիւն Երգոց Երգոյն Որիգինեսի. Կարին, գրիչ Պետրոս աբեղա, Նվիրակ Սուրբ Սաղիմա:

12. **9984.** Ժողովածու. բովանդակություն, մեկնութիւն Երգոց Երգոյն, գովաբանութիւն Ս. Նախավկայի, էջ 1025:

ԱՆԳԼԵՐԵՆԻՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՏՎԱԾՆԵՐ ՈՐԻԳԵՆԵՍԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻՑ

Միայն այն է ընդունելի որպես ճշմարտություն, որը ոչ մի դեպքում չի տարբերվում եկեղեցական ու առաքելական ավանդությունից:

* * *

Հույն փիլիսոփայությունից քաղի՛ր միայն այն, ինչ կարող է օգտակար լինել քրիստոնեական վարդապետության ընդհանուր և նախապատրաստական ուսումնասիրության համար: Քաղի՛ր երկրաչափությունից, աստղագիտությունից այնպիսի մտքեր, որոնք կարող են օգտակար լինել Սուրբ Գրքոց մեկնության համար, որպեսզի ինչ որ փիլիսոփայության աշակերտները ասում են թե երկրաչափությունը, երաժշտությունը, քերականությունը, հռետորությունն և աստղագիտությունը՝ փիլիսոփայության աղախիններն են, մենք էլ կարենանք նույնը ասել փիլիսոփայության մասին, (քրիստոնեական) վարդապետության նկատմամբ:

* * *

Երբ սուտ վկայություններ էին տալիս մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի դեմ, Նա լուռ էր մնում: Իսկ երբ անհիմն զրպարտություններ էին առաջ բերում Նրա դեմ, Նա պատասխան չէր տալիս դրանց,

[37] «Էջմիածին» ամսագիր, 1980, մայիս էջ 39—42:

հավատալով որ իր ողջ կյանքն ու ընթացքը հրեաների մեջ լավագույն հերքումն էին քան որևէ պատասխան այդ սուտ վկայությունների և կամ ձևական որևէ ինքնապաշտպանություն՝ այդ ամբաստանությունների դեմ:

Ես ոչինչ գիտեմ, իմ բարեպաշտ Ամբրոսիոս[1] թե դու ինչո՞ւ ես ցանկանում որ ես գրավոր պատասխան գրեմ Կելսոսի[2] քրիստոնյաների և Եկեղեցիների դեմ կատարած ամբաստանությունների համար, ամբաստանություններ, որոնք չեն ներկայացնում ակնհայտ մի հերքում. այնուամենայնիվ (քրիստոնեական) վարդապետությունը ավելի լավ մի պատասխան է քան որևէ մի գրվածք: Կելսոսի կեղծ ասույթների մեղադրանքները չեն կարող ունենալ որևէ հավատալիություն և արժեք:

Ես չգիտեմ որտեղ պետք է դասել այն մարդուն, որը հավատքի մեջ տատանվելու դեպքում կարիքը ունենա կարդալու Կելսոսի գրքերում քրիստոնյաների դեմ կատարած նրա մեղադրանքները: Հավատացյալների բազմության մեջ կարող են լինել այնպիսի մարդիկ որոնց հավատքը կարող է տատանվել և Կելսոսի գրքերի ընթերցումով կարող է կործանվել նրանց հավատքը: Բայց, ո՞վ կարող էր այդ բնույթի պատասխաններ տալ, որպեսզի հերքվեն Կելսոսի ասածները և լուսաբանվի ճշմարտությունը: Ես արդար եմ համարում կատարելու ձեր ցանկությունը և պատասխանելու ձեր ուղարկած գրքերին: Բայց, միաժամանակ ես չեմ կարծում որ գտնվի այնպիսի մի մարդ որը փոքր-ինչ գաղափար ունենա փիլիսոփայությունից և թույլ տա իրեն իր գրությունը անվանել «բան ճշմարիտ ընդդէմ քրիստոնէից», ինչպես Կելսոսը վերնագրել է իր գիրքը:

* * *

Սվետարանը ունի իր սեփական ապացույցը, փաստը՝ որը աստվածային է քան հույն դիալեկտիկների գրածները: Առաքյալը աստվածային այդ մեթոդը անվանում է «Հոգու և Զորության արտահայտություն»:

«Հոգին» առնչվում է այն մարգարեությունների հետ, որոնք բավարար են ընթերցողների մեջ առաջ բերելու հավատք, ովքեր կարդում են դրանք, հատկապես այն հատվածների մեջ որոնք վերաբերվում են Քրիստոսի: Իսկ «Զորությունը» երևում է այն նշանների և հրաշալի գործերի մեջ որոնք կատարվել են և որոնց հետքերը դեռևս պահպանվում են այն մարդկանց մեջ, որոնք իրենց կյանքը դասավորել են ըստ Սվետարանի պատգամների:

* * *

Քրիստոնյաների մեջ դեռևս պահպանվում են Սուրբ Հոգու հետքերը, Սուրբ Հոգու՝ որը երևացել է աղավնու կերպարանքի ներքո: Սուրբ Հոգու այդ հետքերը հալածում են չար ոգիներին, բազում բժշկումներ կատարում ու կանխատեսում՝ որոշ դեպքեր ըստ Բանի կամքին: Կելսոսը կամ հրեան, որին նա ներկայացրել է, կարող են հեգնանքով վերաբերվել իմ ասելիքի վերաբերյալ, որովհետև նրանք պնդում են որ շատերը քրիստոնյա են դարձել իբր թե հակառակ իրենց կամքին, ինչ որ մի ոգու ազդեցությամբ, ոգի՝ որը իբր թե հանկարծակի նրանց մտքերը, (քրիստոնեական) վարպետության դեմ նրանց ատելությունը փոխել է դեպի դրա պաշտպանությանը, և մեռնելու պատրաստակամությանը:

* * *

Աստուծու խոսքը ցույց է տալիս որ թեև քարոզելը ըստ ինքյան արդար է և հավատքի համար օգտակար, սակայն, բավական չէ այն, մարդկային սրտին հասնելու մինչև որ որևէ մի Զորություն Աստուծու կողմից չհասնի քարոզչին և նրա խոսքի վրա չերեվի շնորհը: Միայն Աստուծու օգնությամբ է որ քարոզիչների խոսքը դառնում է ավելի ազդեցիկ և արդյունավոր: Մարգարեն 67-րդ սաղմոսում ասում է. «Տէր տացէ զԲանն ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ»:

Եթե ուրեմն շնորհված նույն վարդապետությունները գտնվում են ինչպես հույների, այնպես էլ մեր Աստվածաշնչում, սակայն, հույների խոսքերը չունեն նույն ներգործուն զորությունը և մարդկանց հոգիները իրենց ենթարկելու նույն կարողությունն ու շնորհը (Ա Կորնթ. Բ 4 «խոսքը և քարոզությունը իմաստության պատիր խոսքերով չեն որ կատարվում են, այլ Հոգու արդյունավորությամբ և զորությամբ):

* * *

Ովքեր հավատում են որ շնորհը և ճշմարտությունը ձեռք են բերվում Հիսուս Քրիստոսի միջոցով, նրանք ընդունում են որ Հիսուսն է ճշմարտությունը, ըստ նրա

[1] Ամբրոսիոսը Որիգենեսի բարեկամն էր և նրա գործերի մեկենասը:

[2] Որիգենեսի «Ընդդէմ Կելսոսի» հակաճառության մասին տես, «Էջմիածին» ամսագիր 1981, փետրվար, էջ 33:

վկայության. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ. ԺԴ 6)։ Այս գիտությունը մարդկանց մղում է դեպի ավելի լավ և դեպի երջանիկ կյանքով ապրելու, ըստ Քրիստոսի ուսուցման։ Այս բոլորի ակունքները ուրիշ բան չեն եթե ոչ Հիսուսի խոսքերն և ուսուցումը։ Հիսուսի խոսքերը ասելով մենք նկատի չունենք միայն այն խոսքերը որ նա արտասանել է երբ մարմնացավ և բնակվեց «ի մարմնի»։ Այդ ժամանակից առաջ Հիսուսը՝ Բանն Աստված Մովսեսի և մարգարեների մեջ էր խոսում։ Առանց Բանն Աստուծու զորության, նրանք ինչպե՞ս կարող էին մարգարեանալ Հիսուսի մասին։ Եթե մեր նպատակը չլիներ սահմանափակվել սույն հակիրճ գրության սահմաններում, ապա դժվար չէր լինի ցույց տալ որպես ապացույց մեր ասածների, որ Աստվածաշնչից դուրս Մովսեսն ու մարգարեները չէին կարողանար խոսել և գործել, եթե նրանք տոգորված չլինեին Հիսուսի Հոգով։ Ավելին, երկինք համբառնալուց հետո Հիսուսը խոսեց իր առաքյալների հետ, ինչպես վկայում է Պողոս առաքյալը հետևյալ խոսքերով. «Եթե ապացույց եք փնտրում, ձեզ հետ ինձնով խոսում է Քրիստոսը, որը հզոր է ձեր մեջ և ոչ տկար» (Բ Կորնթ. ԺԳ 3)։

*
* *

Մեր աչքերը անդադար չեն կարող նայել լույսի ակունքին, այսինքն՝ արևին, սակայն, երբ դիտում ենք արևի փայլը կամ լուսամուտից ներս թափանցող նրա շողերը, հասկանում ենք որ որքա՞ն հոյակապ է լույսի ակունքն և պաշարը։ Նմանապես երկնային նախախնամության գործերն ու ամբողջ աշխարհը ճառագայթներ են, համեմատած Աստծու էության և գոյության հետ։ Հետևաբար, մեր միտքը անկարող է տեսնել Աստծուն և հասկանալ ինչպես որ Նա կա։ Մենք Աստծուն ճանաչում ենք Նրա գործերի գեղեցկությամբ և Նրա ստեղծած արարածների վայելչության մեջ։

*
* *

Մենք հավատում ենք որ Բանն Աստված գերիշխում է արարչագործության վրա և յուրաքանչյուր մարդուն առաջնորդելու է դեպի իր իսկ կատարելությունը։ Եվ այդ վիճակում ամեն ոք իր սովորական զորության կենսագործումով ընտրելու է ինչ որ ինքը կամենում է, և ստանալու է ինչ որ ինքը ընտրում է։

*
* *

Ուշադիր հետևիր թե ո՛ւմ ես խոստովանում քո մեղքերը։ Փորձիր բժշկին, իմանալու համար թե արդյո՞ք նա թույլ է թույլերի հետ, սգավոր՝ սգավորների հետ։ Արդյո՞ք նա նկատելու է որ քո հիվանդությունը այնպիսին է, որին նա պետք է ծանոթանա՝ բուժելու համար, համայնքի մարդկանց ներկայությանը։ Ուրեմն, հետևիր փորձառու բժշկի խորհրդին։

ՄԻ ՀԱՏՎԱԾ ՈՐԻԳԵՆԵՍԻ «ՎԱՍՆ ՎԻՇԱՊԻՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

(Գրաբար թարգմանությամբ)

Զկենդանի զուժգին մարմին սովորեցաք ասել՝ վիթխարի, և այլք՝ անճոռնի, իսկ կէսք՝ անհեթեթ։ Այլ նա, որ էն, ոչ այլափոխի, մանաւանդ զգազանս ազգի անուամբ յորջորջեմք։ Եւ զազգս թիւնաբեր օձիցս յանախագոյն խարամանիս ասեմք, իսկ զմեծն և զգազանագոյնն քան զընկերս վիշապ անուանեմք։ //Եւ նա ոչ օձ է և ոչ վիշապ, այլ սողուն թիւնաբեր։ Վիշապն անուն փոխի ի նմանէ, և թոյնքն ոչ այլափոխի։ Եւ վասն դժուարանցից լերանց զորս վիշապ անուանեմք և խարամանիս ասեմք։ Եւ բազում կենդանեաց ի մեծամեծաց՝ վիշապ, ի ցամաքայնոց ասեմք՝ փոդ, օձի, և մարդոյ չարին բռնաւորի դնելով անուանքըստ ոչ զբնութիւնն շրջեն։ Վիշապ ասեմք և աներևոյթ չար զօրութեանն, որ խնդրեմուտից ներս թափանցող նրա շողերը, հասկանում ենք որ որքա՞ն հոյակապ է լույսի ակունքն և պաշարը։ Նմանապես երկնային նախախնամության գործերն ու ամբողջ աշխարհը ճառագայթներ են, համեմատած Աստծու էության և գոյության հետ։ Հետևաբար, մեր միտքը անկարող է տեսնել Աստծուն և հասկանալ ինչպես որ Նա կա։ Մենք Աստծուն ճանաչում ենք Նրա գործերի գեղեցկությամբ և Նրա ստեղծած արարածների վայելչության մեջ։

(Աշխարհաբար թարգմանությամբ)

Սովորել ենք կենդանի ուժեղ մարմինները անվանել վիթխարի, և ուրիշներ՝ անճոռնի, իսկ կեսը՝ այլանդակ, իսկ նա, ինչպես կա, չի կերպափոխվում, մանավանդ, որ գազանները տեսակի անունով ենք կոչում։ Եվ թունավոր օձերի տեսակները հաճախ խարամանիս ենք կոչում, իսկ ընկերներից ավելի մեծն ու գազանագույնը վիշապ ենք անվանում։ Եվ նա ոչ օձ է և ոչ վիշապ, այլ թունավոր սողուն։ Նրա վիշապ անունը փոխվում է, բայց թույնը չի փոխվում։ Եվ դժվարանցանելի լեռների պատճառով ոմանց վիշապ ենք անվանում և խարամանիս կոչում։ Եվ շատերին մեծ կենդանիներից՝ վիշապ, իսկ ցամաքայիններից՝ փիղ, օձ ենք անվանում, և չար և բռնավոր մարդու վրա այդ անունները դնելով

լով// զօրութիւն ի Տեառնէ, եհար զարդարն ի չարաչար հարուածս ոչ միով մասամբ, այլ ամենայն մասամբք, արտաքնովք և ներքնօք, որովք և անձամբք և յամենայնի յաղթող երևեալ: Իսկ հակառակորդն յամենայնի տկարացեալ և ի վայր անգեալ: Եւ արդարն դեռևս կայր ի պատերազմի իբրև քաջ հսկազէն զգեցեալ ի նոյն կռիւ ճակատեալ և բարեկամքն պատերազմէին, այլ ոչ նովին զինուոր պէս և առաջին որ պարտեցաւ, թէպէտ// և զիսնարհութեան կողմ ունէին և զանձինս ընդ մեղաց պարտիւք արկանէին ինքեանք յառողջութեան, իբրև բարեգործք երևէին և զհարուածսն Յոբայ մեղաց և չարագործութեան դնէին, այլ ոչ տարապարտ կռուեցելոյն, և յիրաւ ի պարտեցելոյ: Իսկ Յոբ յեցեալ կայր յարդարութիւն և ոչ մերժէր յինքեանէ զարդարութիւն և զանմեղութիւն ճշմարիտ խօսելով յաջողակ բանիւք պարտէր զբար//եկամսն: Իսկ Աստուած որ ետ զնա ի նահատակութիւն յայտնի և ծածուկ պատերազմ երևեցոյց զիւր զօրութիւնն՝ կշտամբելով զ(Յ)ոբ, միանգամայն և ուսուցանելով. առաջին՝ զիւր զօրութիւնն, որ աղբիւր ամենայն բարեաց, երկրորդ՝ զսկիզբն արարչութեան զմիտս արդարոյն վարժէ յերկնէ և յերկրէ և որ ի սուա բերմունքս են, և ըստ մասանց բազմութեան ցուցանէ զարարող զիւր զօրութիւնն: Զի ոչ մի//այն արարիչ է, այլ ամբաւ մեծութիւն, որ ձգեաց, յարկեաց զերկինս առանց մեքենայի և հաստատեաց կացոյց զծանր մարմին երկրիս առանց սեանց, յօրինեաց, կազմեաց զդիրս լուսաւորացս, առանց այլայլելոյ զատոյց, որոշեաց իւրաքանչիւր գազանաց կայանս, սփռեաց, տարածեաց ընդ կակղութիւն օդոյն զազգս թռչնոց, հոգացեալ գթացաւ զամբարտաւան ամբարիշտս// թոթափեալ յերեսաց երկրէ: Զի հասարակութեամբ մարդիկ կեցցեն յերկրի և ամենեքեան ըստ իւրաքանչիւր սերի կեցցեն մարդոյն ի հնազանդութիւն, և մարդ բնական իմաստութեամբ հանճարեղ մտօք վայելիցէ յարարածս:

(«Նշխարներ Որոգինեսի հայկական թարգմանությունից (Ե—Զ դ.). «Խօսք Որոգինիի գիրք հինգերորդ ասացուած վասն վիշապին, որ ի Յոբ պատմի, ի Դաւիթ և յայլս». («Էջմիածին» ամսագիր, 1979, փետրվար, էջ 22). Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 6036 ձեռագրից):

նրա բնությունը չենք փոխում: Վիշապ ենք անվանում նաև աներևույթ չար ուժը, որ զորություն խնդրելով Տիրոջից՝ արդարին (Հոբին) հարվածեց չարաչար հարվածներով, ոչ թե մեկ մասով, այլ բոլոր մասերով՝ արտաքին և ներքին, որով և՛ անձով և՛ ամեն ինչով հաղթող երևաց: Իսկ հակառակորդը ամեն ինչում տկարանալով վայր ընկավ: Եվ արդարը դեռևս պատերազմի մեջ էր ինչպես հսկայազեն քաջ նույն կռվում ճակատամարտելով, և բարեկամները պատերազմում էին, ոչ թե որպես նրա զինվոր, և առաջինը պարտվեց, թեպետև անարդարության կողմն էին բռնում և իրենք առողջ կերպով իրենց անձը մեղքերի պարտքի տակ էին դնում, իբրև բարեգործներ էին երևում և Հոբին մեղքերի և չարագործության հարվածներ էին հասցնում, ոչ թե տարապարտ կռվողի այլ հիրավի պարտվածի պես: Իսկ Հոբը հույսը դրել էր արդարության վրա, և արդարությունն ու անմեղությունը իրենից չէր հեռացնում՝ ճշմարիտ խոսելով հաջողակ խոսքերով հաղթում էր բարեկամներին: Իսկ Աստված, որ նրան նահատակության տվեց, հայտնի և ծածուկ պատերազմով ցույց տվեց իր զորությունը՝ Հոբին հանդիմանելով, միաժամանակ և ուսուցանելով, առաջինը՝ որ բոլոր բարիքների աղբյուրը իր զորությունն է, երկրորդ՝ արարչության սկիզբը արդարի միտքը դաստիարակում է երկնքից և երկրից՝ և ինչ որ սրանց մեջ դեպքեր կան, և բազում մասերով ցույց է տալիս իր ստեղծարար զորությունը: Որովհետև ոչ միայն արարիչ է, այլ անընդգրկելի մեծություն, որ ձգեց, հարկերի վերածեց առանց մեքենաների և երկրի ծանր մարմինը հաստատեց, կանգնեց առանց սյուների, հորինեց, կարգավորեց լուսատուների դիրքը, առանց այլևայլության զատեց, որոշեց յուրաքանչյուր գազանի կայանը, սփռեց, փափուկ օդի մեջ տարածեց թռչունների տեսակները, հոգաց, գթաց ամբարտավան ամբարիշտներին՝ թոթափելով երկրի երեսից: Որպեսզի մարդիկ հավասար ապրեն երկրի վրա, և բոլորը, յուրաքանչյուրը ըստ տեսակի, հնազանդվեն մարդուն, և մարդը բնական իմաստությամբ և հանճարեղ մտքով վայելի արարածների մեջ:

ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ՝ ԱԿԱՆԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄԻՉ (263—340)

Հայրաբանական գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկն է նաև Գ դարի մատենագիր, գիտնական և եկեղեցական գործիչ, պաղեստինյան Կեսարիա քաղաքի եպիսկոպոս Եվսեբիոս Պամփիլիոսը, որը համարվում է «եկեղեցական պատմության հայրը»:

Ընդհանուր եկեղեցական մատենագրության գլխավոր գրական տեսակներն են եղել առաքյալների և առաքելական հայրերի գրած **թղթերը** (նամականին):

Նոր Կտակարանում Ս. Պողոս, Ս. Հակոբոս, Ս. Պետրոս, Ս. Հովհաննես և Ս. Հուդա առաքյալի անունով կան առաքելական և ընդհանրական թղթեր[1]:

Այնուհետև առաքյալներից հետո, Ա—Բ դարերի առաքելական հայրերը՝ Ս. Կղեմես Հռոմեացին, Անտիոքի Սուրբ Իգնատիոս «Աստուածազգեաց», Զմյուռնիայի Ս. Պոլիկարպոս եպիսկոպոսները ևս գրել են հովվական «խրախուսական» թղթեր, որոնց հայերեն հին թարգմանությունները հասել են մեզ[2], «որոնցով Եկեղեցու հայրերը բարոյական խրատներ ու բացատրություններ էին տալիս ժամանակակիցներին հետաքրքրող զանազան եկեղեցա-կրոնական խնդիրների մասին և հարաբերություն պահպանում միմյանց ու համայնքների հետ»[3]:

Եկեղեցական մատենագրության գրական այլ տեսակներից են եղել **քարոզը, ճառը, ջատագովությունն** ու **հակաճառությունը, մեկնությունը, վկայաբանությունը** կամ **վարքագրությունը, փիլիսոփայական, ճարտասանական** և **բերականական գրվածքները:** Ունենք նմանապես եկեղեցական նշանավոր հայրերի քարոզների ու ճառերի, ջատագովությունների և հակաճառությունների, մեկնությունների ոսկեդարյան կամ հին հայերեն թարգմանությունները, վարքագրություններ[4], ինչպես նաև «Վարք սրբոց Հայրանց և քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց»[5]:

Եկեղեցական մատենագրության կարևոր գրական տեսակն է հանդիսացել նաև **եկեղեցական պատմությունը:** Գրական այդ ժանրի նշանավոր ներկայացուցիչն է Եվսեբիոս Կեսարացին, որի կարևոր երկու գործերն են «Քրոնիկոն»-ը կամ «Ժամանակագրութիւն պատմական»-ը, և «Եկեղեցական պատմութիւն»-ը:

Եվսեբիոս Կեսարացին ծնվել է 263 թվականին պաղեստինյան Կեսարիայում, որը քրիստոնեական դաստիարակության և մշակույթի մեծ օջախ է դառնում մանավանդ Որիգենեսի ժամանակ (185—254):

Որիգենեսից առաջ Կեսարիայում քարոզչական, մանկավարժական բեղուն գործունեություն է ծավալում Պամփիլիոս երեցը, որը եղել է Եվսեբիոս Կեսարացու առաջին ուսուցիչն ու «հոգևոր հայրը»: Կեսարացին որպես «որդի Պամփիլիոսի» ի պատիվ իր «հոգևոր հորը» անվանվել է նաև «Եւսեբիոս Պամփիլիոս»[6]:

Եվսեբիոսը գրել է որպես երախտագիտության արտահայտություն իր մեծ ուսուցչի՝ Պամփիլիոս երեցի 3 գրքերից բաղկացած վարքն ու կենսագրությունը, որոնցից ոչինչ չի հասել մեզ: Բայց Եվսեբիոսը իր «Եկեղեցական պատմութեան» մեջ խոսում է նրա մասին և վկայում որ Պամփիլիոսը «ամենապերճախոս հռետորն էր, ճշմարիտ փիլիսոփա իր կյանքի կերպին մեջ, ...սուրբ նահատակը մեր օրերի... և Կեսարիա քաղաքի ամենասիրելի մարդը»[7]:

Կեսարացին իր գիտական լուրջ դաստիարակությունը և դեպի մեծանուն Որիգենեսի նկատմամբ ունեցած իր պաշտամունքը ու սերը պարտական է Պամփիլիոսի:

Կեսարացին Որիգենեսի աստվածաբանական դպրոցում կատարելագործում է իր քրիստոնեական բազմակողմանի դաստիարակությունը, դասընկեր ունենալով 231—238 թվականներին Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքի ապագա եպիսկոպոս Սուրբ Գրիգոր Սքանչելագործին[8]:

---

[1] Նոր Կտակարան, արևելահայերէն նոր թարգմանութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1975, էջ 409—661:

[2] «Էջմիածին» ամսագիր, 1979, հուլիս համար, էջ 13—23:

[3] **Ակադեմիկոս Մանուկ Աբեղյան,** Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին (սկզբից մինչև X դար), ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1944, էջ 93:

[4] Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, (դար Դ—ԺԳ) Վենետիկ, 1889, 1—783 էջ:

[5] Հատոր Ա և հատոր Բ, Վենետիկ, 1855. նաև **Մանուկ Աբեղյան,** նույնը, էջ 93—113:

[6] **Johannes Quasten,** Patrology, vol. III, *էջ 310*,

[7] **Եւսեբիոս Կեսարացի,** Պատմութիւն եկեղեցական, 1818 Վենետիկ դպրութիւն եօթերորդ:

[8] «Էջմիածին» ամսագիր, Հունվար, 1981, էջ 28—36:

Պամփիլիոսը դաժան հալածանքների է ենթարկվում Մաքսիմիանոս Դայա կայսրի (286—305) օրով, բանտարկվում, որտեղ 304 թվականին Եվսեբիոս Կեսարացու օգնությամբ գրում է իր նշանավոր «Զատագովութիւն Որիգինեայ» աշխատությունը, բաղկացած 5 գրքերից, որոնցից ոչինչ չի հասել մեզ: Եվսեբիոսը ապա գրում է 6-րդ գիրքը, որը մտել է նրա «Եկեղեցական պատմութեան» մեջ որպես «դպրութիւն վեցերորդ»:

Պամփիլիոսը նահատակվում է 310 թվականին: Իսկ Կեսարացին փախչում է Եգիպտոս Թեբայիդի անապատը, վանականների մոտ, բայց ձերբակալվում է և բանտարկվում:

313 թվականին, Միլանոյի հրովարտակով Մեծն Կոնստանդիանոս կայսրի օրով (306—337) կայսրության մեջ քրիստոնեությունը ազատվում է հալածանքներից: «Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ Դ դարը և Ե դարի առաջին կեսը իրենց նշանակությամբ վերին աստիճանի մի հետաքրքիր շրջան են ներկայացնում: Հույն-Հռոմեական կայսրության մեջ քրիստոնեության արտաքին դրության առաջ եկած հիմնական փոփոխությունը Եկեղեցու ներքին կյանքի համար ամենաբարեհաջող հետևանքներն ունեցավ, լիակատար հնարավորություն տալով նրա անդամներին հոգու բոլոր ուժերը Եկեղեցու ներքին հարցերի լուծման վրա կենտրոնացնելու»[9]:

Ստեղծված այս «բարեհաջող» դրությունից օգտվում է նաև Եվսեբիոս Կեսարացին, ազատվում է բանտից և Կոնստանդիանոս կայսրի պաշտպանությամբ և հովանավորությամբ 314 թվականին ընտրվում է պաղեստինյան Կեսարիա քաղաքի եպիսկոպոս, որտեղ սերտ հարաբերության մեջ է մտնում արիոսականների հետ. «Նա արիոսական չէր» (նույնը, էջ 45), բայց աշխատում է հաշտեցնել ուղղափառներին և արիոսականներին, փոխադարձ զիջումներով: Կոնստանդիանոս կայսրը հանուն Եկեղեցու միության և կայսրության խաղաղության, պաշտպանում էր Կեսարացու այս դիրքը: Կեսարացին համարվում է Կոնստանդիանոսի «խորհրդականը աստվածաբանական» հարցերում:

325 թվականին կայսրի հրամանով Կ. Պոլսի արվարձան Նիկիայում գումարվում է Ա տիեզերական ժողովը, որին մասնակցում են 318 հայրապետներ, որոնց շարքում նաև՝ «Եւսեբիոս ի Կեսարեայ»[10]: Եվսեբիոսը սույն ժողովում դարձյալ շարունակում է «իր հաշտարար» դերը, որպես «պահպանողական ուղղության ներկայացուցիչ»: Բայց, ստորագրում է «Նիկիական Հաւատոյ Հանգանակը» որպես «քրիստոնեական և ամենավավերական փաստաթուղթը ուղղափառ վարդապետության»[11]: Կայսրի ցանկությունն էր նաև որ ստորագրվի «Նիկիական Հանգանակը» ի շահ Եկեղեցու միության և կայսրության խաղաղության:

Կեսարացին 330 թվականին մասնակցում է Անտիոքի տեղական ժողովին, որտեղ սահմանվում են 25 գլուխ կանոններ, «Կանոնք Անտիոքայ գլուխք ԻԵ», որովհետև, «յետ բազում ժամանակաց անցանելոյ դարձեալ բորբոքեցաւ աղանդն Արտեմոնայ, վասն ամենասուրբ տօնից այլափոխումն առնել»[12]:

Եվսեբիոսը մահանում է 340 թվականին Մեծն Կոնստանդիանոս կայսրի մահից մեկ տարի հետո:

ԵՎՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Որիգենեսից հետո Եվսեբիոս Կեսարացին համարվում է Հույն Եկեղեցու մեծավաստակ մատենագիրներից մեկը, հին պատմության և քրիստոնեական Եկեղեցու տարեգրության և եկեղեցագիտության ուսումնասիրության բնագավառում:

Նա անխոնջ ու անհոգնաբեկ ուսումնասիրող է եղել, խղճամիտ, պրպտող պատմիչ ու գրող՝ մինչև իր հառաջացյալ տարիքը:

Նրա մատենագրական հարուստ վաստակը ներկայացնում է հատընտիր, ընդարձակ գործերի մի հիանալի գանձարան, ծաղկաքաղ արված հեթանոս ու քրիստոնյա մատենագիրների, պատմիչների գործերից, որոնք մեզ չեն հասել: Եվսեբիոս Կեսարացու լուրջ ու խորը գիտական հմտությունը Ս. Գրոց, հին ազգերի, մշակույթների և քրիստոնեական պատմության, անտիկ փիլիսոփայության և գրականության, աշխարհագրության, ժամանակագրության, մեկնաբանության, բանասիրության և հնագրության մասին ապշեցուցիչ է և կոթողային:

Հետագա դարերի Եկեղեցու հայրերը նշել

---

[9] **Պրոֆ. Ն. Սագարդա**, Ցոյն-Արևելքի հին եկեղեցական Աստուածաբանական գիտությունը իր ծաղկման շրջանում (IV—V դ.) ռուս. թարգմ. Արտակ վարդապետ Սմբատեան, Վաղարշապատ, տպարան Մ. Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1910, էջ 3:

[10] Կանոնագիրք հայոց, Ա, 1964, Երևան, էջ 136:

[11] Encyclopedia Americana, vol. 10, էջ 58

[12] Կանոնագիրք..., նույնը, էջ 203—204 և 586:

են որ թեև «Եվսեբիոսի ոճը հաճելի չէ և ոչ էլ՝ փայլուն, բայց նա մեծ զարգացման, գիտնականության ու հմտության տեր մի մարդ է»:

Նրա մատենագրական վաստակը հաջորդ դարերի քրիստոնյա պատմիչների, գիտնականների համար եղել է իրենց ուսումնասիրության մեջ որպես սկզբնաղբյուր:

Կեսարացին միաժամանակ մեծ ջատագով է, հակաճառող, տիրական դեմքը իր դարի գաղափարական-փիլիսոփայական հակաճառությունների մեջ: Նա վերջին ջատագովն է և առաջին ժամանակագիրը: Նա համարվում է իր ժամանակի ամենատիպական ներկայացուցիչը: Թեև, իր աստվածաբանական գործերով չի պատկանում քրիստոնեական անցյալի Ա—Գ դարերի մեծավաստակ դավանաբանների փաղանգին, որովհետև նա աստվածաբանական որոշ հարցերում, ինչպես նշվեց, թույլ է տվել սայթաքումներ:

Եվսեբիոս Կեսարացին, սակայն, անմահ անուն և իրավ համբավ է վաստակել, քրիստոնեական մշակույթի պատմության մեջ իր փառավոր պատմական երկու աշխատություններով[13]:

Որպես պատմիչ նա մասնավոր հոգատարությամբ և ժրաջանորեն հավաքել է ինչ որ սերտ առնչություն է ունեցել Ավետարանի ժամանակից սկսած, ընդհանրական Եկեղեցու պատմության, առաքելության և կյանքին հետ: Նա այդ բոլորը սիրով հանձնել է քրիստոնեական հաջորդ սերունդների ուշադրության և ուսումնասիրության:

ՊԱՏՄԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Եվսեբիոս Կեսարացու մատենագրական վաստակի առաջին գործը **Քրոնիկոնն** է, կամ **Կանոնք ժամանակաց** կոչված աշխատությունը, որը շարադրվել է 303 թվականին և բաղկանում է երկու մասերից:

Առաջին մասը ներածություն է, և ամփոփ մի համառոտագրություն քաղդեացիների, ասորեստանցիների, հրեաների (Հին Կտակարանի տվյալների վրա), եգիպտացիների, հույների, հռոմեացիների պատմության, քաղվածաբար կատարված վերոհիշյալ հին ժողովուրդների պատմական աղբյուրներից:

Քրոնիկոնի երկրորդ մասը ժամանակից տախտակների մի ցուցակ է, զուգահեռ սյունակների մեջ նշանակված, պատմական ծանոթություններով, որոնք այդ պատմական գլխավոր իրադարձությունները դարձնում են տիեզերական, և մանավանդ սրբազան պատմություն անցյալի:

Եվսեբիոսը իր ցուցակի հիմք է ընդունել Աբրահամ նահապետի ծննդյան թվականը, մ. թ. ա. 2016—2015: Նա ժամանակակից տախտակների իր ցուցակը բաժանել է հինգ մասի.

Աբրահամից մինչև Տրոյայի կործանումը.

Տրոյայի կործանումից մինչև հունական առաջին օլիմպիադան, և անկից մինչև Դարեհի իշխանության երկրորդ տարին, և ապա անկից մինչև Քրիստոսի մահը, և Քրիստոսի մահից մինչև 303 թվականը:

Քրոնիկոնի հունարեն բնագիրը կորել է, կան հատակտոր հատվածներ միայն:

Քրոնիկոնի ամբողջական բնագիրը պահվել է միայն հայերեն թարգմանությամբ[14]:

Քրոնիկոնի հայերեն թարգմանության և հրատարակության մասին կխոսվի ստորև:

2. **Եկեղեցական պատմութիւն.**

Հայրաբանական գրականության ոսկեղեն էջերից մեկն է համարվում «Եկեղեցական պատմության հայր» Եվսեբիոս Կեսարացու հոյակապ սույն աշխատությունը, որը անմահացրել է նրա անունը:

«Եկեղեցական պատմութիւն»-ը բաղկանում է 10 գրքերից կամ «Դպրութիւն»-ներից: Կեսարացին ներկայացրել է ընդհանրական Եկեղեցու պատմությունը նրա հիմնադրումից մինչև 324 թվականը:

Վերոհիշյալ պատմությունը մի անգին ժողովածու է Եկեղեցու հիմնադրության, առաքելական քարոզության, քրիստոնեական կյանքի պատմական իրադարձությունների, փաստաթղթերի մասին, խնամքով քաղված Եկեղեցու պատմության մասին հին աղբյուրներից, եկեղեցական հայրերի գործերից և վկայություններից:

Եվսեբիոս Կեսարացին իր նշանավոր «Եկեղեցական պատմութիւնը» շարադրելիս իր առաջ նպատակ է դրել գրի առնել

1. Առաքյալներից հետո Եկեղեցու ղեկավարությանը կանչված եպիսկոպոսների, նվիրապետական Աթոռների հաջորդականությունը կամ «Գաւազանագիրքը», նրանց թեմական գործունեությունը, եկեղեցական համայնքների ստեղծումն ու կազմակերպությունը, ներքին կանոնական ու դավանաբանական հարցերը, յուրաքանչյուր համայնքի ավանդությունները:

2. Քրիստոնեական աստվածաբանական դպրոցների բացումը, քրիստոնյա առաջին մեծ ուսուցիչները, քարոզիչները, մանկավարժներն ու մատենագիրները:

3. Եկեղեցու ներքին միությունն ու միաս-

[13] Johannes Quasten, նույնը, էջ 311:

[14] Նույնը, էջ 312:

նությունը, նրա խաղաղ կյանքը խանգարող հերետիկոսական շարժումները ու վարդապետությունները:

4. Հրեաների հակա-քրիստոնեական դիրքը և նրանց կրած աստվածային պատիժը:

5. Քրիստոնեության դեմ կազմակերպված պետական հալածանքները, հեթանոս, հրեա մատենագիրների կողմից քրիստոնեության կրոնի և վարդապետության դեմ գրված հակաճառությունները, թշնամական վերաբերմունքները, զրպարտությունները:

6. Հանուն Ավետարանի և քրիստոնեական կրոնի կատարված մասսայական նահատակությունները, «արիւն մարտիրոսաց, հիմն Եկեղեցւոյ»:

7. Եկեղեցու վերջնական հաղթանակը Դ դարի առաջին տասնամյակում, հեթանոսության, հրեության և պետական հալածանքների դեմ:

Ամբողջ գործը կրում է հմուտ և քաջակորով ջատագովության բնույթ:

Եվսեբիոս Կեսարացու հիմնական նպատակն է եղել նաև պատմական փաստերով ապացուցել որ Եկեղեցին աստվածահիմն Հաստատություն է, առաջնորդվում է Սուրբ Հոգու կողմից, մյուս բոլոր կրոնները, փիլիսոփայական դրությունները ոչնչանալու են ու միայն քրիստոնեական Եկեղեցին իշխելու է երկրի վրա. մարդկային մտքերի և սրտերի վրա իր համամարդկային վեհ քարոզով ու սկզբունքներով, որովհետև աստվածային ճշմարտությունը հետզհետե ավելի ու ավելի ամուր տեղ է գրավելու մարդկանց գիտակցության մեջ, ըստ Աստվածաշնչի վկայության. «Դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն զնա» (Մատթ. ԺԶ, 18):

Եվսեբիոս Կեսարացու «Պատմութիւն եկեղեցական» աշխատության մասին հանգամանորեն կխոսվի ստորև վերոհիշյալ գործի հայերեն թարգմանության և հրատարակության առիթով:

Եվսեբիոսի «Պատմութիւն Եկեղեցական»-ը մեզ հասել է երեք թարգմանություններով. ասորերեն (հավանաբար Դ դարի թարգմանություն), հայերեն՝ կատարված 416—420 թվականներին, Եդեսիայում ասորերենից և լատիներեն (Ե դար):

Արևմուտքում Կեսարացու սույն աշխատության լատիներեն թարգմանությունը օգտագործվել է: Թարգմանիչ Ռուֆինոսը Կեսարացու պատմությունը շարունակել է և հասցրել մինչև 395 թվականը, մինչև Մեծն Թեոդոս Ա կայսրի մահը (379—395):

3. **Պաղեստինյան նահատակներ.**

303—311 թվականներին, Եկեղեցու դեմ պետական դաժան հալածանքների ժամանակ, Պաղեստինի Եկեղեցին տվել է ամենաշատ նահատակներ: Կեսարացին որպես ստուգապատում և ականատես վկա, գրել է նահատակների վարքագրությունը, «Գործք նահատակաց» անունով: Կեսարացու սույն աշխատությունը գրվել է նրա «Եկեղեցական պատմութիւն»-ից առաջ և բաղկացած է եղել հինգ գրքերից: Աշխատությունը ամբողջությամբ մեզ չի հասել: Պատմիչը սակայն իր «Պատմության» մեջ անդրադարձել է նահատակների վկայաբանությանը[15]:

Վերոհիշյալ հալածանքների ժամանակ մարտիրոսական մահով նահատակվել է նաև Կեսարացու ուսուցիչ և գործակից Պամփիլուս Կեսարացի երեցը: «Հնարավոր չէ,—վկայում է Եվսեբիոսը,— մի առ մի գրել նահատակվածների վարքը, որովհետև մարտիրոսների թիվը շատ ու շատ է, անհաշիվ»: Իր «Պատմութեան» մեջ նա նկարագրում է նաև սրտի մորմոքով նահատակության դաժան ձևերը և վրդովմունքով արձանագրում՝ որ Պաղեստինում ծանր չարչարանքների և հալածանքների ժամանակ, քրիստոնյաներից ոմանք տկարացան, և ուրացան իրենց քրիստոնեական հավատքը, որի մեջ ծնվել ու սնվել էին, հեթանոսաբար զոհեր մատուցեցին կուռքերին և կերան առաքելական պատվերի հակառակ «կուռքերին մատուցված զոհերից և արյունից և խեղդամահ արվածից»[16]:

4. **Ներբող Կոնստանդիանոս կայսրի.**

Եվսեբիոսը հիացող է եղել այս կայսրի կյանքին, նրա պետական ու կրոնական քաղաքականությանը, և եղել է նրա մտերիմն ու խորհրդականը՝ եկեղեցական հարցերում: Որպես այդպիսին Կեսարացին վայելել է միշտ կայսրի համակրանքն ու վստահությունը: Պատմիչը վարձահատույց է եղել կայսերական այդ վերաբերմունքի համար և Կոնստանդիանոսի գահակալության 25-ամյակի առիթով անդրադարձել է մեծ կայսրի կյանքին և գործունեությանը, և՛ նրա կենդանության և՛ նրա մահից հետո: Եվսեբիոսը «Մեծն Կոնստանդիանոսի միապետությունը բնութագրել է որպես քրիստոնեական հույսերի ամենաբարձր իրականացումը: Ըստ նրա Կոնստանդիանոսը Աստուծու ընտրյալ պատգամավորն էր, Եկեղեցին փրկելու պետական հալածանքներից»[17]:

---

[15] **Եւսեբիոս Կեսարացի**, Եկեղեցական պատմութիւն, նույնը, դպրութիւն 7 և 8:

[16] Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, Գործք Առաքելոց, գլ. ԺԵ, 29, էջ 335:

[17] **Johannes Quasten**, նույնը, էջ 319:

313 թվականին Կոնստանդիանոսի Միլանոյի հրովարտակով «ապահովվում էր քրիստոնեական վերջնական հաղթությունը... Եկեղեցին դառնում էր իրավատեր մարմին... ապահովվում նյութապես... կայսրն էլ իր կողմից շատ լավ ըմբռնել էր Եկեղեցու մեծ, բարոյական զորությունը և դրա համար աշխատում էր պետության շահերի տեսակետից սերտ դաշնակցություն կապել Եկեղեցու հետ... անհրաժեշտ էր պահպանել Եկեղեցու միությունը՝ պահպանելու համար պետության միությունը...»[18]:

Եվսեբիոս Կեսարացու սույն ներբողը որը բաղկանում էր չորս գրքերից, քննադատության է ենթարկվել և՛ իր ժամանակին և՛ ապա հետագա դարերում, կայսրի հասցեին կատարած իր շռայլ ու չափազանց գովասանքների համար և գնահատվել՝ որպես ոչ թե գիտական, պատմական ու ամբողջական, փաստերի և ապացույցների վրա հիմնված մի աշխատություն, այլ դրվատական և զգացումներով գրված մի ներբող, կապված «Աստուծու Բարեկամ» կայսրի եկեղեցական քաղաքականության և նրա ապրած «աստվածահաճո և բարեպաշտ կյանքի հետ»: Եվսեբիոսը կայսրին ներկայացրել է որպես Դ դարի այդ ժամանակի մի նոր «Մովսես մարգարե» որի կայսերական առաքելությունն է եղել փրկել քրիստոնյա «ընտրյալ ժողովուրդը բռնակալներից և թշնամիների կապանքներից»:

5. Ջատագովական և մեկնողական աշխատություններ.

Կեսարացին իր ջատագովական աշխատությունների մեջ լայնորեն օգտագործել է նախկին եկեղեցական ու հույն ջատագովների քրիստոնեական կրոնի պաշտպանության ի նպաստ գրած ողջ ժառանգությունը: Այս բնագավառում նրա ծանոթությունը անցյալի հեթանոսական, կրոնական, փիլիսոփայական և քրիստոնեական գրականության մասին, որպես գիտնականի, ապշեցուցիչ է: Եվսեբիոսը «ներկայացնում է անցյալի մեծ կրոնները պատմական մի մեծ ակնարկի մեջ որպես ամբողջություն և նախապատրաստություն նոր՝ քրիստոնեական կրոնի»[19]:

Եվսեբիոսի ջատագովական գործերը նվիրվել են Ավետարանների վավերականության և ստուգության հարցերին: Այդ գործերից են «Ընդհանուր, նախապատրաստական ներածություն Ավետարանի», «Պատրաստություն Ավետարանի», «Ապացույց յԱւետարանն», «Ընդդէմ Պորփիւրի», «Ընդդէմ Հիերակլեսի», «Աստուածայայտնութիւն» աշխատությունները[20]:

Կեսարացու Աստվածաշունչի գրքերի վրա գրած մեկնողական աշխատությունները նույնպես կարևոր, գիտական խորք ու բովանդակություն ունեցող ուսումնասիրություններ են, մանավանդ Հին Կտակարանի մեսիական մարգարեությունների նվիրված մեկնությունները, որոնցում ապացուցվում է քրիստոնեական կրոնի տիեզերական և համամարդկային բնույթը:

Եվսեբիոսի մեկնողական աշխատությունների մեջ հիշվում են նաև «Ավետարանի կանոններ», «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն Եսայեայ», «Ցաղագս Զատկի» աշխատությունները, քարոզներ, ճառեր, նամակներ:

Եվսեբիոսի մատենագրական ողջ վաստակի մասին լրիվ և ամբողջական գաղափար կազմելու համար, նայել Quasten, Patrology, vol. III, էջ 311—345, Migne-ի բազմահատոր աշխատությունները, Patrologia Graeca.

(Շարունակելի)

[18] **Երվանդ վարդ. Տեր-Մինասյանց,** Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հատոր առաջին, Ս. Էջմիածին, 1908, էջ 228—229:

[19] **Johannes Quasten,** նույնը, էջ 328:

[20] Նույնը, էջ 328—334. Encyclopedia americana vol. 10, էջ 586.